ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

31 հունվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

13
(2679)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 161

«Ժողովուրդ» օրաթերթը կարճատեւ դադարից հետո շարունակում է շարքը, որում ներկայացնում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությունները, որոնք այդպես էլ իրականություն չեն դարձել, կամ, այլ կերպ ասած, Նիկոլ Փաշինյանը ստել է: Այս անգամ կանդրադառնանք մի ոլորտի, որում արձանագրված «հաջողությունների» ու հաջողված պայքարի մասին իշխանությունները հաճախ են խոսում, ինչը, սակայն, հեռու է իրականությունից: Խոսքը խաղադրույքների ոլորտին է վերաբերում: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը հունվարի 10-ին՝ լրագրողների հետ հանդիպմանը, հայտարարեց, թե իրենց իշխանության կողմից շահումով խաղերի ոլորտում կատարված օրենսդրական սահմանափակումների արդյունքում խաղադրույքների ոլորտում լուրջ անկում է գրանցվել: CivilNet-ի փաստերի ստուգման թիմը՝#CivilNetCheck-ը, պարզել է, որ շահումով խաղերի ոլորտում, հակառակ վարչապետի պնդումներին, անկում չի գրանցվել: Պետեկամուտների կոմիտեն, #CivilNetCheck-ի հարցմանն ի պատասխան, հայտնել է, որ Հայաստանում, 2022-ի հունվար-նոյեմբերի տվյալներով, ինտերնետ շահումով խաղերում ավելի քան 5,3 տրլն դրամի խաղադրույք է կատարվել. սա 2021թ.-ի ամբողջ տարում գրանցված 3,9 տրլն դրամից ավելի է մոտ 36%-ով: Այս թիվը ռեկորդային է Հայաստանի պատմության մեջ: Կատարված խաղադրույքների ծավալը 2017-ին կազմել է 138,5 մլրդ դրամ, 2018-ին՝ 333,6 մլրդ դրամ, 2019-ին հատել է տրիլիոնի շեմը եւ կազմել է 1,1 տրլն դրամ, 2020-ին՝ մոտ 2 տրլն դրամ, 2021-ին՝ 3,9 տրլն դրամ: Հատկանշական է, որ 2022-ի 11 ամիսներին գրանցված 5,3 տրլն-ի մեջ ներառված չեն դեկտեմբերի տվյալները, հետեւապես՝ նաեւ Ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերի (որոնք անցկացվել են նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 18-ը ներառյալ) մեծ մասի ժամանակ արված խաղադրույքների ծավալը: Այս թվում ներառված չեն նաեւ խաղատներում կատարված խաղադրույքները: Այսպիսով, վարչապետ Նիկոլ Փաշինյանի պնդումը, թե խաղադրույքների ոլորտում շատ լուրջ անկում է գրանցվել, սխալ է: Կատարվող խաղադրույքի ծավալները փաստացի ոչ միայն չեն նվազել, այլեւ շարունակ աճում են: Ստացվում է՝նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Վարչապետի տիկին Աննա Հակոբյանը հունվարի 18-ին դուստրերի հետ այցելել էր Իրան՝ մասնակցելու «Ազդեցիկ կանանց միջազգային առաջին համագումարին»: Աննա Հակոբյանը սոցցանցերում ջանք ու եռանդ չէր խնայում, պարբերաբար լուսանկարներ էր հրապարակում, որպեսզի ցույց տա, թե ինչ «ջերմ» մթնոլորտում է անցել իր՝Թեհրան այցը, ինչպիսի լավ ընդունելության է արժանացել այնտեղ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, սակայն, ոչ տեղի հայ համայնքը, ոչ էլ հայկական եկեղեցին չեն ընդունել Աննա Հակոբյանին: Տեղեկացանք, որ վարչապետի տիկինն անգամ խուսափել է այցելել հայկական եկեղեցի, որպեսզի այնտեղի հայերին չհանդիպի, փոխարենը Իրան ժամանած մյուս հյուրերի հետ այցելել է մզկիթ ու այնտեղ միջոցառումների մասնակցել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայ համայնքի ներկայացուցիչներից մեկը հաստատեց մեր այս տեղեկությունը՝նշելով, որ սա հատուկ վերաբերմունք է ոչ միայն Աննա Հակոբյանի, այլեւ Հայաստանից այցելած բոլոր պետական պաշտոնյաների նկատմամբ: Իրանահայերն այսպիսով իրենց դիրքորոշումն են հայտնում գործող իշխանությունների եւ նրանց վարած քաղաքականության նկատմամբ, ինչի հետեւանքով Հայաստանը եւ Արցախը գրեթե ամեն օր նոր կորուստներ են կրում: «Նիկոլ Փաշինյանը պատերազմից հետո երկու անգամ այցելել է Թեհրան, բազմաթիվ նախարարներ են այցելել, մի քանի ամիս առաջ Ալեն Սիմոնյանն էր այցելել, արդեն անցած շաբաթ էլ Աննա Հակոբյանը երկու դուստրերի հետ Իրանում էր, բայց այդ բոլոր այցերի ժամանակ ազգային առաջնորդարանում որեւէ այցելություն չի կազմակերպվել նրանց համար, հայ համայնքը ղեկավարող կառույցները չեն հյուրընկալել նրանց. սա հստակ ուղերձ է եղել: Ես լսել եմ նաեւ թեմական առաջնորդի կողմից, որ ինքը եւս պատրաստ չէ ընդունել այսօրվա իշխանություններին իրենց կեցվածքի ու վերաբերմունքի պատճառով, որը ցուցաբերել են պատերազմից հետո: Ինչ վերաբերում է եկեղեցի այցին, ապա դա տարբեր է. եկեղեցիների դռները բաց են, նույնիսկ օտարերկրացիները կարող են գալ, մոմ վառել. արգելքը ազգային առաջնորդարան հյուրընկալելու կապակցությամբ է եղել: Որեւէ բան չէր արգելվում նրան այցելել հայկական եկեղեցի, նույնիսկ դրանից է խուսափել. հավանաբար, մտավախություն է ունեցել, որ այնտեղ քաղաքացիների կիանդիպի, որոնք կոշտ են վերաբերվելու իրեն, խուսափել է անախորժ միջադեպերից: Բայց, դրա փոխարեն, տեսանք, որ ջադրայով այցելել է իսլամական սրբավայր, մասնակցել է տարբեր արարողությունների: Սպահանում Սուրբ Ամենափրկիչ վանք ու թանգարան է այցելել կարճ ժամանակով, այնտեղից մի երկու սելֆիներ է արել, բայց այնտեղ էլ համայնքը ղեկավարող կառույցներն ու եկեղեցին պատրաստ չեն եղել նրան ընդունելու»,- պատմեց մեր զրուցակիցը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի գործով երկրորդ անձը կկալանավորվի: Ո՞վ է նա: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ կալանավորվող պաշտոնյան զորամասի թիկունքի գծով պատասխանատուներից եւս մեկն է: Նշենք, որ 2023 թվականի հունվարի 25-ին որոշում էր կայացվել ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (զինվորական պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ), ինչի արդյունքում հունվարի 26-ին ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ն կալանավորվեց: Հիշեցնենք, որ 2023թ. հունվարի 19-ին՝ժամը 01:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի, դրա հետեւանքով նույն վաշտի 15 զինծառայողների մահվան, մի քանի զինծառայողների՝տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստանալու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի հոգաբարձուների խորհուրդն ուղիղ մեկ ամիս է, ինչ լուծարվել է: Խորհրդի լիազորությունները դադարեցված համարվելուց ուղիղ մեկ ամիս անց՝այսօր, Բրյուսովի կառավարման հարցն օդում կախված է մնում: Բանն այն է, որ, ըստ «Հիմնադրամների մասին» օրենքի, ԿԳՄՍ նախարարությունը մանեւրելու ու օրենքը տարբեր կերպով մեկնաբանելու հնարավորություն ունի: Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝«հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին կառավարչի ծանուցումը ստանալու օրվանից հետո՝30 օրվա ընթացքում»: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ»: Նշենք, սակայն, որ դեռեւս այս տարվա հունվարի 12-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հայտարարել էր, որ նախարարության խնդիրն այս պահին բուհի խորհուրդը կազմավորելն է: Այս մասով մեկ ամսվա ընթացքում ի՞նչ գործողություն է արել ԿԳՄՍՆ-ն. «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցին նախարարության հասարակայնության հետ կապերի ու լրատվության վարչությունից տեղեկացրին. «ԿԳՄՍՆ-ն, օրենքով սահմանված կարգով, քայլեր է ձեռնարկում համալսարանի բնականոն գործունեության ապահովման համար: Այս մասով առաջիկայում հայտարարություն կլինի»: Հաշվի առնելով, սակայն, խիստ «ժողովրդավար» իշխանությունների՝բուհերի ինքնավարությունը մեղմ ասած հարվածի տակ դնելու ձեռագիրը, ապա պետք չէ բացառել, որ չնայած համալսարանում տեղի ունեցած ընտրություններին ու օրենքի տառին համապատասխան ռեկտոր ընտրելու հանգամանքին, այնուամենայնիվ, իշխանությունները Բրյուսովի համալսարանում նույնպես իրենց «սրտի ռեկտորին» են ուզում տեսնել:

ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑ

ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋՏԵՂՈՒՄ

Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի խոսքով՝ Իրանն անդայման դատապարտելու է Իսրայելի՝ իրեն ուղղված հարվածներին: Նրա համոզմամբ՝ տարածաշրջանում տեղի ունեցած գործընթացները, դայմանական ասած, երրորդ համաշխարհայինի մասին են վկայում:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի հետ:

-Պարոն Մելքոնյան, տարածաշրջանն այժմ կրկին լարված է: Ինչի՞ ականատեսն ենք լինում այս օրերին:

-Կարելի է ասել՝ երրորդ համաշխարհային պատերազմի մերձավորարեւելյան ֆրոնտը, կարծես թե, ավելի է թեժանում կամ բացվում: Ակնհայտ է, որ այսօր աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները, այդ թվում՝ ռազմական, շաղկապված են միմյանց հետ, եւ այն, ինչ տեղի է ունենում դիցուք ուկրաինական ճակատում, ուղիղ կամ անուղղակի կապ ունի տարածաշրջանում սառած կամ ակտիվ կոնֆլիկտների հետ: Պայմանականորեն կարող ենք ասել, որ երրորդ համաշխարհային պատերազմը ընթացքի մեջ է, եւ ակնհայտ է, որ աշխարհում կա շահերի բաժանման անջրպետ, որից այն կողմ կան տարբեր պետություններ եւ ուժային կենտրոններ: Պարզ է, որ Իրանը վաղուցվա թիրախ է, եւ հենց ինքն էլ իր կողմից ընկալվում է որպես թիրախ եւ, դրան ընդառաջ, սիստեմատիկ քայլեր միշտ արել եւ անում է: Ինչ-որ պահի այս սառած կոնֆլիկտը պետք է ակտիվացման նշաններ ցույց տար, սակայն հաշվի առնելով Իրանի ակտիվությունը՝ մենք միգուցե պետք է մի քիչ ձեռնպահ մնանք կանխատեսելուց, որ կսկսի լայնածավալ պատերազմ: Այն հարվածները, որ հասցվում են Իրանին, կանխատեսվում է, որ նա կփորձի համարժեք պատասխաններ տալ: Դժվար է ասել՝ այն կվերածվի ուղիղ, լայնածավալ պատերազմի, թե ոչ:

-Իրանի եւ Ադրբեջանի հարաբերությունների ու Թուրքիայի դիրքորոշման մասին ինչ կարող եք ասել:

-Այն, որ Իրանի եւ Ադրբեջանի հարաբերությունները վերջին շրջանում բավականին լարվել են, այն, որ Ադրբեջանն անում է հայտարարություններ, որոնք իրենց քաշով ավել են Իրանի հանդեպ, ցույց է տալիս, որ այս հարցում նա, կարծես թե, պրովոկատորի եւ հրահրողի դեր ունի: Այստեղ մեկ հանգամանք էլ կա. Թուրքիան է բավականին լուռ, եւ հայտնի է, որ նրանց հարաբերությունները համարվում են կայուն: Ադրբեջանի այս հոխորտանքները նաեւ Թուրքիայի շնորհիվ են բարձրաձայնվում: Թուրք-իրանական սահմանը չի փոխվել մի քանի տարի: Շուշիի հռչակագիրը հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ կա թուրք-ադրբեջանական կոնֆլիկտ եւս: Այսինքն՝ եթե Իրանի եւ Ադրբեջանի միջեւ կոնֆլիկտ լինի, Թուրքիան ավտոմատ ներգրավվելու է այդ կոնֆլիկտի մեջ՝ ըստ Շուշիի հռչակագրի: Այսինքն՝ այն, որ ասում են՝ կարող է սկսվել լայնածավալ պատերազմ, պետք է հասկանանք՝ իրոք կարող է լինել բավական լայնածավալ, որտեղ մի քանի երկրներ են լինելու մեր հարեւանությամբ՝ Թուրքիա, Ադրբեջան, Իրան, Իսրայել եւ այլն:

-Իսկ մեր կարգավիճակը ո՞րն է լինելու այս դեպքում:

-Գիտեք, մի փոքր կարող է վատ հնչել, բայց նման իրավիճակները երկու ծայրահեղություններ են առաջ բերում պետությունների համար՝ շանս՝ մանեւրելու եւ ավելի բարեհաջող քաղաքական հարթության հասնելու, եւ սպառնալիք՝ ավելի վատ հանգրվանի հասնելու, կործանվելու եւ կորցնելու: Հայաստանը հիմա այդ միջօրեականում է եւ այս լայնածավալ կոնֆլիկտի քամին ճիշտ օգտագործելու, ճիշտ կողմնորոշելու դեպքում կարող է ոչ միայն սպառնալիքների պատուհան բացել, այլ թեթեւ հնարավորությունների պատուհան: Դրա համար պետք է հմտություն, պետք է պոպուլիզմից հեռու քաղաքականություն, պետք է Արեւելքը ոսկերչական ճշգրտությամբ ընկալելու ունակություն եւ պրոֆեսիոնալիզմ: Ցավոք, թվարկածներիցս ոչ մի հմտություն այս իշխանություններին հատուկ չէ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԿՏԻՎ Է

ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆ ՉՍՏԱՑԱՎ

2022 թվականի դեկտեմբերի 16-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը:



Այսպիսով, ըստ ընդունված նախագծի՝ ստեղծվեց Ներքին գործերի նախարարություն: ՆԳՆ ենթակա մարմիններ են դարձել Ոստիկանությունը, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը, Փրկարար ծառայությունը:

Այս փոփոխությունից հետո ՆԳ նախարարի չորս տեղակալներ նշանակվեցին, եւ ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը նոր կառույցում պաշտոն չստացավ: Նա ԱԻ նախարարի կարգավիճակը պահպանելու է եւս մի քանի ամիս, քանի որ այդպես է ամրագրված օրենքում, ինչից հետո ԱԻ նախարարության գործունեությունը կհամարվի ամբողջովին դադարեցված:

Թերեւս հենց դա է պատճառը, որ Փամբուխչյանը դեռ ակտիվ է սոցիալական ցանցերում, կատարում է ԱԻ նախարարի գործառույթներ, մասնակցում անգամ կառավարության նիստին:

Ընդգծենք՝ երբ հունվարի 28-ին երկրաշարժ գրանցվեց, եւ հանրությունը հաղորդագրության էր սպասում, կրկին Փամբուխչյանն էր ակտիվ եւ սոցցանցի իր էջում իրազեկում էր, թե ինչ է կատարվել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԻՄԵԼ Է

Իսրայելում ծեծի են ենթարկել հայ երիտասարդների. որպես Իսրայել-Հայաստան խորհրդարանական բարեկամական խմբի անդամ՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը գրություններ է ուղարկել Իսրայելի օմբուդսմենին, Իսրայելի խորհրդարանի (Քնեսեթ) հանրային անվտանգության հանձնաժողովի ղեկավարին: Հիշեցնենք, որ հունվարի 28-ի ուշ երեկոյան երկու հրեա ծայրահեղականներ Հայոց Վանքի դիմաց նախ փորձել են խոչընդոտել երթեւեկությունը, ապա հարվածել աշխատանքից տուն վերադարձող հայ երիտասարդների ավտոմեքենային: Հայ երիտասարդների քաղաքավարի պատասխանից հետո ծայրահեղականներից մեկն արցունքաբեր գազ է փչել հայ երիտասարդի աչքերին, եւ երկուսով փախուստի են դիմել: Հայ երիտասարդը տեղափոխվել է հիվանդանոց:

ՕՐԵՆՔԸ՝ ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

«Սնդիկի մասին» օրենքը գլխացավանք է դարձել կոսմետիկա եւ խաղալիք ներկրողների համար: Պարզվում է, որ ներկրվող կոսմետիկան պատկան կառույցների կողմից մանրամասն զննվում է. ուզում են հասկանալ՝ ներկրված կոսմետիկան սնդիկ պարունակում է, թե ոչ: Ներկրողները ստիպված են լինում օրերով սպասել, թե, ի վերջո, իրենց ապրանքը երբ ամբողջապես կմաքսազերծվի: Նշենք, որ ՀՀ կառավարության կողմից նախորդ տարվա դեկտեմբերի 1-ի որոշմամբ՝ սահմանվել է սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը. դրանց արտահանումը Հայաստանից եւ ներմուծումը ՀՀ արգելվում է վեց ամիս ժամկետով: Որոշումն ուժի մեջ է մտել այս տարվա հունվարի 1-ից: Բացի այս, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից կոսմետիկայի եւ խաղալիքի շուկան խոշորացույցի տակ է առնվելու, այսինքն՝ սերտիֆիկատ չունեցող օծանելիքակոսմետիկական արտադրանքները, խաղալիքները տեսչական մարմնի կողմից կոչնչացվեն: Տեսուչները ստուգելու են եւ տնտեսվարողից պահանջեն իրացվող արտադրանքի համապատասխանության գնահատման սերտիֆիկատը: Տնտեսվարողն այն մինչեւ վաճառքի հանելը պետք է նախ ուղարկի հավատարմագրված լաբորատորիա. եթե փորձաքննությամբ պարզվի, որ ապրանքն անվտանգ է, ապա կարող է հանգիստ վաճառել:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ ՄՈՍԿՎԱ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները Ռուսաստանի Դաշնություն կգործուղվեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների արտաքին հարաբերությունների, պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովների (կոմիտեների) նախագահների խորհրդակցությանը մասնակցելու համար 2023 թվականի հունվարի 31-ից փետրվարի 1-ը Մոսկվա կգործուղվեն Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, ՔՊական պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը:

Պատգամավորների հետ ՌԴ կմեկնի նաեւ ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջազգային կազմակերպությունների բաժնի գլխավոր մասնագետ Սոֆյա Մնացականյանը:

Տեղեկացանք, որ, բացի գիշերակացի գումարից, որ հրավիրող կողմն է հոգալու, գործուղման հետ կապված մյուս բոլոր ծախսերը ՀՀ պետբյուջեի հաշվին են կատարվելու:

ՎԱՃԱՌՔԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Հայաստանի տարածքում կարգելվի E 128 սննդային հավելման ներմուծումը, օգտագործումը, եւ կարգելվի այդ հավելումը պարունակող ապրանքների վաճառքը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն առաջարկում է արգելված սննդային հավելումների ցանկում ավելացնել E 128 (կարմիր 2G) սննդային հավելումը: Ի դեպ, կարմիր 2G-ն հաճախ ավելացվում է երշիկեղենին եւ պահածոներին: Նշենք, որ այն վտանգավոր է մարդու առողջությանը՝ քաղցկեղածին է, ազդում է նյարդային համակարգի վրա, առաջացնում է շարժողականության, հիշողության խանգարումներ, ընդհանուր թուլություն: Ի դեպ, նշենք, որ սննդամթերքի ստանդարտների եվրոպական գործակալությունը (EFSA) մի շարք ուսումնասիրություններ է անցկացրել՝ պարզելու E128 (կարմիր 2G) ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կարմիր 2G մոնո-ազո ներկանյութը մետաբոլիզացվել է անիլինի, որը համարվում է գենոտոքսիկ միացություն, եւ այն պոտենցիալ քաղցկեղածին է: Եվրոպական հանձնաժողովի՝ 2007 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ՝ պաշտոնապես արգելվել է սննդամթերքի արտադրության մեջ E128 (Red 2G) սննդային հավելումի օգտագործումը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ 2007 թվականից նշված սննդային հավելման ներմուծումը եւ օգտագործումն արգելվել է Ռուսաստանի Դաշնության տարածքում:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ

ՀԱԱԳԱՅՈՒՄ ՔՆՆՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ

Հաագայում գտնվող Արդարադատության միջազգային դատարանը երեկ սկսել է Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ ներկայացված հայցի քննությունը: Դռանում հայկական կողմը Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում իրականացվող գործողությունները որակել է «էթնիկ զտմանն ուղղված աղաղակող գործողություն»:

Պաշտոնական Երեւանը ՄԱԿ-ի Արդարադատության դատարանից պահանջում է ճանաչել Ադրբեջանի խտրական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ եւ հատուցել պատճառած վնասը: Նմանատիպ մի գանգատ էլ Հայաստանի դեմ այդ նույն ատյան է ներկայացրել Բաքուն՝ իր հերթին պահանջելով ճանաչել Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի խտրական վերաբերմունքը:

«Ռասսայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում ներկայացված Երեւանի դիմումում տեղ գտած պահանջները, ընդհանուր առմամբ, վերաբերում են «Ադրբեջանի կողմից տասնամյակներ շարունակ էթնիկ հայերի եւ հայկականության նկատմամբ տարվող ատելության եւ խտրական վերաբերմունքի հետեւանքով առաջացած խախտումների արձանագրմանը»:

«Շրջափակման ամբողջական վերացումից եւ հանրային ծառայությունների մատուցման անխոչընդոտ վերսկսումից բացի, որեւէ այլ քայլ չի կարող թեթեւացնել այն զրկանքները, որոնք կրում են այս դաժան շրջափակման զոհերը», - Reuters-ի փոխանցմամբ՝ հայտարարել է հայկական կողմի շահերը ներկայացնող փաստաբան Կոնստանտինոս Սալոնիդիսը: Հաագայի Արդարադատության միջազգային դատարանում Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը, դատարանին դիմելով, խնդրեց հրատապ միջոց կիրառել եւ պարտավորեցնել Ադրբեջանին բացել արդեն 50 օր շրջափակված Արցախը աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, ապահովել մարդկանց, տրանսպորտի ազատ երկկողմ տեղաշարժը, ինչպես նաեւ անհապաղ վերականգնել էներգիայի մատակարարումը: Այս պահանջը հայկական կողմը 4 օր առաջ հրատապ կարգով է ավելացրել իր դիմումում:

«Եթե դատարանն անհապաղ միջոցներ չձեռնարկի, Լեռնային Ղարաբաղի հայերն անհնարին ընտրության առջեւ կկանգնեն՝ թողնել իրենց պապենական տները կամ մնալ այնտեղ եւ սովամահ լինել», - հայտարարել է Կիրակոսյանը՝ շարունակելով: - Նախագահ Ալիեւը դա հստակ է դարձրել: Նա բացահայտ պահանջել է, որ Լեռնային Ղարաբաղի հայերը հեռանան: Նա պնդել է, որ Ադրբեջանի հիմնական պարտքը հայերին իրենց հողերից վտարելն է: Նա ասել է, որ հայերեն ոչ մի երգ չի երգվելու, եւ որ այսուհետեւ ադրբեջաներենն է իշխելու այդ հողում»:

Ավելի քան մեկ ամիս առաջ մեկ այլ միջազգային ատյան՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Բաքվին պարտավորեցրել էր ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու միջանցքով Հայաստանում բուժման կարիք ունեցող ծանր հիվանդների եւ ճանապարհին առանց սննդի եւ գոյության անհրաժեշտ միջոցների մնացած այլոց տեղաշարժը, նաեւ վերականգնել գազամատակարարումը: Ադրբեջանը անտեսել է ոչ միայն Ստրասբուրգի դատարանի, այլ նաեւ այլ հեղինակային կառույցների, առանձին երկրների՝ Լաչինի միջանցքը բացելու պահանջը:

«Բայց Ադրբեջանը, կարծես թե, հաստատակամ է Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերին «խեղդելու» հարցում: Մեկ հոգի արդեն մահացել է բուժօգնության բացակայության պատճառով, այլոք նման ճակատագրի արժանանալու վտանգի առջեւ են: Խանութների դարակները դատարկ են, սնունդը բաշխվում է քարտերով, դեղամիջոցների եւ բժշկական պարագաների էական պակաս կա… Մանկապարտեզները, դպրոցները փակ են, երեխաները 50 օր բաժանված են ընտանիքներից», - նշել է Հայաստանի ներկայացուցիչը: Հումանիտար աղետի ողջ ծավալը ներկայացնելով՝ Կիրակոսյանն ընդգծել է, որ շրջափակումը, գազի եւ հոսանքի մատակարարման խափանումներն արվում են հատուկ. «Մի քանի օր առաջ, ինչպես ասաց Ալիեւը, եթե ինչ-որ մեկը չի ցանկանում մեր քաղաքացին դառնալ, ճանապարհը բաց է, ոչ ոք նրանց չի կանգնեցնի, նրանք կարող են գնալ խաղաղապահների հովանու ներքո կամ ավտոբուսով: Այլ կերպ ասած՝ ծագումով հայերը չեն կարող մտնել, բայց կարող են դուրս գալ Ղարաբաղից: Հարգելի՛ դատավորներ, այսօրինակ աղաղակող էթնիկ զտման գործողությունները մեր օրերում տեղ չունեն, եւ այս դատարանը վերջին հույսն է Լեռնային Ղարաբաղի հայերի համար»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՔՊ-ական մի խումբ պատգամավորների օգնականները, «շեֆերի» գիտությամբ, պարգեւավճար են պահանջում ԱԺ ղեկավարությունից: «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր պարգեւ պահանջողների ցանկը եւ նշել, որ ստորագրահավաքը նախաձեռնել ու կառավարում են ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը եւ Պաշտպանության ու անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը:

Ֆինանսական սուղ պայմաններում զինվորներին խրճիթում պահող իշխանության խմբակցության ղեկավարի ու քարտուղարի, ինչպես նաեւ իշխող խմբակցության պատգամավորներ Էմմա Պալյանի, Ծովինար Վարդանյանի եւ Արեն Մկրտչյանի օգնականները, «շեֆերի» գիտությամբ, պարգեւ են պահանջում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ օգնականները դիմել են ԱԺ նախագահին եւ աշխատակազմի ղեկավարին՝ պարգեւավճար ստանալու պահանջով: Նկատենք, որ ՔՊ-ական պատգամավորների օգնականները պահանջում են մի բան, որն օրենքով հասանելի չէ իրենց, այլ միայն պետծառայողներին՝ որպես պրոֆեսիոնալների է հասանելի տարվա մեջ 2 անգամ: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրաժարվում է այլեւս պահուստային ֆոնդից պարգեւավճար տալ պատգամավորների օգնականներին, այս պատճառով ՔՊ ներսում լուրջ բախումներ են սկսվել:

Նկատենք, որ այս պատգամավորների օգնականները պարգեւավճար են պահանջում այն դեպքում, երբ ընդամենը օրեր առաջ՝ հունվարի 19-ին, հրդեհի զոհ դարձան 15 զինվոր կացարանի անմխիթար պայմանների պատճառով:

ՀՐԱՏԱՊ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը խորհրդարանում հրատապ քննարկում է նախաձեռնել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այն հաջորդ շաբաթ մեկնարկող ԱԺ քառօրյա նիստերի առաջին օրը՝ երեքշաբթի տեղի կունենա: Հրատապ քննարկման թեմաները, ըստ ներկայացված հիմնավորման, «ՀՀ զինված ուժերում ստեղծված իրավիճակը, խնդիրները եւ հրատապ անելիքները» կլինեն:

Տեղեկացանք, որ ընդդիմադիր պատգամավորների պահանջով՝ հրավիրվող հրատապ քննարկման թեմայի ներկայացուցիչը Գեղամ Մանուկյանն է: Հիմնավորման մեջ նշված է, որ «թեմայի էությանը համապատասխան՝ առնվազն պարտադիր է պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի զեկույցը»: Ընդդիմադիրներն ակնկալում են նաեւ, որ պաշտպանական գերատեսչության ղեկավարն անձամբ ներկա կգտնվի քննարկմանը:

ArmLur.am-ի հետ զրույցում պատգամավոր Գեղամ Մանուկյանն ասաց, որ, ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի պահանջի, անկախ իշխանական՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ցանկության, հրատապ քննարկումը պետք է տեղի ունենա:

ԼՍՈՒՄՆԵՐ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ

«Հայաստան» խմբակցությունը փետրվարի 3-ին խորհրդարանական լսումներ է հրավիրել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ լսումներն անցկացվելու են Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու վերաբերյալ խմբակցության ներկայացրած ԱԺ հայտարարության նախագծի առնչությամբ:

Լսումները կմեկնարկեն ժամը 11:00-ին ԱԺ նիստերի դահլիճում:

ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՐԴԻՆ

ՀՈՐԵՂԲՈՐԸ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

Ամ նախկին դատգամավոր Վերսանդ Հակոբյանի որդին՝ Կարեն Հակոբյանը, դատի է տվել Երեւանի շամպայն-գինիների գործարանի կառավարմամբ զբաղվող հորեղբորը՝ Հրայր Հակոբյանին: «Ժողովուրդ» օրաթերթը դատական տեղեկատվական համակարգից տեղեկացավ, որ 2022 թվականի դեկտեմբերի 22-ին Վերսանդիկ Հակոբյանի որդին՝ Կարեն Հակոբյանը, քաղաքացիական դատարանում հորեղբոր դեմ հայց է ներկայացրել՝ պահանջելով, որ ժառանգական գույք (շինություններ, ունեցվածք, բիզնես եւ այլն) ճանաչեն: Նկատենք, որ դատարանը գործը ընդունել է վարույթ, եւ գործը մակագրվել է դատավոր Լիզա Գրիգորյանին: Դատելով իրավիճակից՝ Ամ նախկին պատգամավորի մահվանից հետո վերջինիս որդիները իրենց հոր ժառանգության խնդրով բախվել են հորեղբոր հետ, բանավոր կերպով չեն կարողացել հասնել արդարության եւ հասել են դատարան: Ինչով կավարտվի վեճը՝ կիմանանք՝ հետեւելով զարգացումներին: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց նաեւ Հրայր Հակոբյանի հետ՝ հասկանալու համար, թե նա ինչ խնդիրներ ունի իր եղբոր որդիների հետ, որ գործը հասել է դատարան: Ի պատասխան՝ Հրայր Հակոբյանմ ասաց. «Դրանում որեւէ բան չկա, ժառանգության հետ է կապված: Օրն եկել է, ամեն ինչ ընթացքով կլուծվի: Կռիվ-մռիվ չէ, իրար չենք խփում, որեւէ խնդիր չունենք. եթե լինի, Ձեզ տեղյակ կպահենք»:

Հիշեցնենք, որ դեռեւս 2022 հոկտեմբերի 19-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Հայկական ավանդական շամպայն առաջիկայում, հնարավոր է, վաճառքի չլինի: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն են դիմել Երեւանի շամպայն-գինիների գործարանի աշխատակիցները՝ տեղեկացնելով, որ արդեն չորս ամիս է, ինչ աշխատավարձ չեն ստանում. «Մայիսից հետո աշխատավարձ չենք ստացել. արդեն չորս ամիս է՝ գործարանը մատնված է անգործության, ցիստերները քանդում, մաս-մաս վաճառում են: Երջանկահիշատակ Վերսանդ Հակոբյանը կարողանում էր պահել գործարանը, նրա մահից հետո ամեն ինչ գլխիվայր շուռ է եկել»: Մեկ այլ աշխատակից էլ ահազանգեց. «Ցիստերները մոնտաժում եւ որպես լոմ վաճառում են: Դրանով գործարանը խաղող էլ է մթերել մոտ 1000 տոննա, եւ մարդիկ չգիտեն, թե այդ խաղողն ինչ են անելու, որտեղ են պահելու, որտեղ են կոնյակի սպիրտ սարքելու»: Մեզ ահազանգած քաղաքացիների խոսքերով՝ Հակոբյաններին պատկանող «Գարանտ սերվիս»-ի աշխատողները եւս աշխատավարձ չեն ստացել: Նշենք, որ 2022 թվականի հուլիսին մահացել է ընկերության հիմնադիր Վերսանդ Հակոբյանը, եւ նրա մահից հետո գործարանի կառավարմամբ զբաղվում է եղբայրը՝ Հրայր Հակոբյանը: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Հրայր Հակոբյանի հետ: «Ղալաթ են արել, որ նման բան են ասել: Գործարանը չի փակվելու, մենք ապրանք ենք արտահանում: Մեզ մոտ ոչ թե նորմալ է, այլ ավելի քան նորմալ է. նոր արտադրություն ենք դնում: Մենք ցիստերները հանել ենք, որ նոր «լինյա» դնենք, այլումինե տակառները գինեգործությունից հանվել են, դրվել դրսում, ոչ թե վաճառքի համար են: Իսկ աշխատավարձը տրվում է նորմալ ժամանակին. մի քիչ ուշացում եղել է, կկարգավորենք»,- նշեց գործարանի փաստացի ղեկավարը»: Մենք կհետեւենք զարգացումներին՝ հասկանալու համար՝ արդյոք իսկապես աշխատակիցների իրավունքները չեն ոտնահարվում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է

ԻՆՉԻ՞ ԿՎԵՐԱԾՎԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Շաբաթ գիշերը իրանական լրատվամիջոցները հաղորդեցին, որ Իրանի տարածքում ռազմական օբյեկտներ են խոցվել, աշխատել է հակօդային պաշտպանությունը: Լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Իրանի Սպահան քաղաքում՝ պաշտպանության նախարարության զինամթերքի պահեստի ուղղությամբ, անօդաչու թռչող սարքերով հարձակում է տեղի ունեցել:

Այս առթիվ ArmLur.am-ը զրուցել է իրանագետ Արտյոմ Տոնոյանի հետ:

-Պարոն Տոնոյան, ի՞նչ եք կարծում, Իրանի ռազմական օբյեկտների վրա հարձակումը կարո՞ղ է լայնածավալ ռազմական գործողությունների վերածվել:

-Իրանն աշխատում է հնարավորինս չներքաշվել պատերազմի մեջ: Նման լարվածություն եղել է նաեւ 2010-ականների սկզբին, բայց, այնուամենայնիվ, այդ ժամանակ էլ պատերազմի չվերաճեց: Նույնն էլ հիմա. Իրանը կանգնած է մարտահրավերների առջեւ, բայց չեմ կարծում, որ հավանականությունը մեծ է լայնածավալ պատերազմի, հատկապես որ մինչ այս պահը դեռ վերջնականապես պարզ էլ չէ, թե որ երկիրն է իրականացրել այդ հարձակումը: Իհարկե, ամենաշատը խոսվում է Իսրայելի մասին, բայց վերջնականապես հաստատված չէ այս տեսակետը:

-Ակնհայտ է, որ մեր տարածաշրջանում իրավիճակը գնալով լարվում է: Ի՞նչ պետք է անի Հայաստանը, որպեսզի չվերածվի ռազմական գործողությունների պլացդարմի, ի՞նչ քաղաքականություն մենք պետք է վարենք:

-Ցանկացած պատերազմ, որը կլինի Հայաստանի սահմանին, լրջագույն մարտահրավեր է մեզ համար: Այն մարտահրավեր է ոչ միայն Հայաստանի, այլեւ Իրանի հարեւանությամբ գտնվող ցանկացած պետության համար. առաջանալու է փախստականների խնդիր, միգրանտների ներհոսք եւ այլն: Պետությունն ինքը պետք է նման պարագայում անցնի ճգնաժամային կառավարման եւ կարողանա իրավիճակը կառավարել:

Գործողությունների համալիր ծրագիր է պետք թե՛ անվտանգության ապահովման, թե՛ հումանիտար խնդիրների մասով: Այսինքն՝ հարցը միայն մեզ չի վերաբերում. բոլոր հարեւաններն էլ նման խնդիրների բախվելու են ռազմական գործողությունների դեպքում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴԱՏՈՒՄ ԵՆ

2022 թվականի սեպտեմբերի 13-ին եւ 14-ին տեղի ունեցած պատերազմի դեպքով հարուցված քրեական գործերով մեղադրյալի աթոռին են հայտնվում նաեւ ժամկետային զինծառայողներ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մանվել Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի ժամկետային զինծառայող, 13.09. 2022 թվականից ընդգրկված լինելով մարտական հերթապահության՝ զորամասի մարտական կիրառման շրջանում, 19.09.2022 թվականին՝ ժամը 01:00-ի սահմաններում, հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումից. առանց համապատասխան թույլտվության թողել է մարտական կիրառման շրջանը, իսկ 21.09. 2022 թվականին՝ ժամը 17:18-ի սահմաններում, ներկայացել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն:

ՄԵԿ ԱՆՁ ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ինները որդ կայազորային քննչական բաժնում իրականացվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ զինծառայող Ա.Ա.-ի՝ հրազենային վիրավորում ստանալու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ: 2023թ. հունվարի 29-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ ՊՆ ՌՈ Կապանի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Ն զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի ավագի օգնական, պարտադիր ժամկետային զինծառայողը, ըստ նախնական տվյալների, նույն մարտական դիրքում ծառայություն իրականացնող մեկ այլ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ա.Ա.-ին ամրակցված ԱԿ-74 տեսակի գործարանային համարի ինքնաձիգը լիցքաթափելիս արձակել է մեկ կրակոց, ինչի հետեւանքով վերջինս գլխի հատվածում ստացել է հրազենային վիրավորում եւ տեղափոխվել բուժհաստատություն: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է քրեական վարույթ: Իրականացվում են անհետաձգելի վարութային եւ ապացուցողական գործողություններ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու նպատակով: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 27-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 109 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՁՄՌԱՆԸ ԾԱՌԵՐԸ ԷՏՈՒՄ ԵՆ

Դիլիջանի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջը հայտնում է, որ Դիլիջան համայնքում կատարվում է չորացած, ընկած եւ վնասված ճյուղերի էտ տարածքը բարեկարգելու նպատակով: Ծառերի էտը սովորաբար կատարում են գարնանը, ոչ թե ձմռան կեսին: Դիլիջանի համայնքապետարանում գյուղատնտեսությունից հասկացող չկա՞:

2000 ԴՈԼԱՐ՝ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Արթուր Լեւոնի Չոբանյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Թուրքիայի Հանրապետությունում ապրող ծանոթից՝ Կարեն Մելքոնյանից, եւ վերջինիս կնոջից՝ Ռուզաննա Հայկանյանից ստացել է առաջարկ 2000 ԱՄՆ դոլար գումար վարձատրության դիմաց մեկնել Թուրքիա, նրանցից ստանալ առանձնապես խոշոր չափի Մեթամֆետամին տեսակի թրամիջոց, դրանք տեղափոխել Հայաստանի Հանրապետություն եւ իրացնել իրենց նախանշած անձանց: Ա. Չոբանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 267.1 հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

ԲԱՆԿԸ՝ ԻՋԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ

Իջեւանի կենտրոնական զբոսայգու հյուսիսային մասում տարիներ շարունակ գործում է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, հայտնի գործարար Խաչատուր Սուքիասյանին պատկանող «ՀայԷկոնոմբանկ»-ի Իջեւանի մասնաճյուղը: Բանկի մասնաճյուղի սպիտակավուն երկու շենքեր են գտնվում զբոսայգում: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ կանաչապատ տարածքներում, զբոսայգիներում արգելվում է կապիտալ շինությունների կառուցումը: Բանկի մասնաճյուղի շենքը եւ կից շինությունը կառուցվել են նախկին իշխանությունների օրոք: 9 տարի՝ 2010-2019 թվականներին «ՀայԷկոնոմբանկ»-ի Իջեւանի մասնաճյուղի կառավարիչն է եղել Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Տավուշի ներկայիս մարզպետ Հայկ Ղալումյանը:

Ո. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՁԵՎԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՆԵՐ

ՀՈՂԵՐՆ ԷԺԱՆ ՕՏԱՐՈՒՄ ԵՆ

Նախկինում բազմիցս փաստական տվյալներով ներկայացրել եմ, որ Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը մեծ թափով օտարում է Դիլիջան քաղաքի բնակելի կառուցապատման հողերը, դրանք վաճառում ոչ միայն դիլիջանցիների, այլ նաեւ Երեւան քաղաքի եւ հանրապետության այլ վայրերի բնակիչների: Դիլիջան քաղաքում բնակելի կառուցապատման հողամասերի մեկ քառակուսի մետրի շուկայական նվազագույն գինը գերազանցում է 10 հազար դրամը, սակայն Դիլիջան քաղաքի կառուցապատման համար նախատեսված հողերը ձեւական աճուրդներով օտարվում են շուկայականից ցածր գներով: Որ աճուրդները ձեւական բնույթ են կրում, վկայում է այն հանգամանքը, որ աճուրդներում արվում է ընդամենը երկու քայլ, եւ այդպես որոշվում է աճուրդի հաղթողը: Այդպիսի աճուրդների հետեւանքով համայնքի բյուջե չեն մտնում հարյուրավոր միլիոն դրամներ: Երեւան քաղաքի բնակչուհիները որտեղի՞ց են տեղյակ, որ Դիլիջան քաղաքի Մայաթ-Նովա եւ Սարալանջի փողոցներում աճուրդի դրված հողամասեր կան, դրանք իրենց համար ոլիտանի են բնակելի առանձնատուն կառուցելու համար: Մայրաքաղաքի բնակչուհիները եւ բնակիչները ժամանում են Դիլիջան քաղաք եւ աճուրդներում հաղթող ճանաչվում: Դիլիջանի ոլեսական քոլեջի շրջանավարս, անձնական գործում իր սեռը «արու» գրած, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ? փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Դավիթ Սարգսյանը շարունակում է Դիլիջանի հողերն արագ օտարել:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում եմ, որ հունվարի 25-ին Դ. Սարգսյանը որոշում է կայացրել Դիլիջան քաղաքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» Սայաթ-Նովա փողոցի 7/7 հասցեում գտնվող 546.9 քմ հողամասը բնակելի տան կառուցման նպատակով Երեւան քաղաքի Գրիգոր Զոհրաբի փողոցի բնակիչ Մանե Մարտիրոսյանին օտարելու մասին: Ըստ այդ որոշման՝ աճուրդում հողամասի մեկնարկային գինը եղել է 3 միլիոն 828 հազար 300 դրամ, աճուրդում առավելագույն գինը կազմել է 4 միլիոն 19 հազար 715 դրամ:

Հունվարի 25-ին Դ. Սարգսյանը որոշում է ընդունել Դիլիջան քաղաքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» Դիլիջան քաղաքի Հովքի փողոցի 1/1 հասցեում գտնվող 4425.9 քմ հողամասը տան կառուցման նպատակով Երեւան քաղաքի Երվանդ Քոչարի փողոցի բնակիչ Աննա Վասիլյանին օտարելու մասին: Ըստ այդ որոշման՝ աճուրդում հողամասի մեկնարկային գինը եղել է 30 միլիոն 981 հազար 300 դրամ, աճուրդում առավելագույն գինը կազմել է նույնքան՝ 30 միլիոն 981 հազար 300 դրամ: Երբ աճուրդի մեկնարկային եւ առավելագույն գները նույնն են, էլ ի՞նչ աճուրդ: Նույն օրը՝ հունվարի 25-ին, Դ. Սարգսյանը որոշում է կայացրել Դիլիջան քաղաքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» Սարալանջի 6-րդ նրբանցք, 22/2 հասցեում գտնվող 439.0 քմ հողամասը բնակելի տան կառուցման նպատակով Երեւան քաղաքի Հալաբյան փողոցի բնակիչ Արամ Ամիրյանին օտարելու մասին: Ըստ այդ որոշման՝ աճուրդում հողամասի մեկնարկային գինը եղել է 3 միլիոն 73 հազար դրամ, աճուրդում առավելագույն գինը կազմել է 3 միլիոն 226 հազար 300 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՈՒՐԵՐ

ՏԱՆԿԵՐԸ ԿՕԳՏԱԳՈՐԾՎԵՆ ԳԱՐՆԱՆԸ

Ուկրաինայի զինված ուժերն Արեւմուտքից ձեռք բերած տանկերը, հավանաբար, գարնանը գործի կդնեն. այս մասին կիրակի օրն ունեցած հարցազրույցի ժամանակ հայտարարել է Ուկրաինայի պաշտպանության նախարար Ալեքսեյ Ռեզնիկովը:

«Հեռահարձակման համար Արեւմուտքից մեզ տրամադրված տանկերը, հուսով եմ, գարնանն արդեն կօգտագործենք,- հարցազրույցի ժամանակ ասել է պաշտպանական գերատեսչության ղեկավարն ու շարունակել:- Վստահ եմ, որ առաջիկայում տանկերի նոր խմբաքանակ էլ կստանանք, ու սա (տանկերի տրամադրման գործընթացը) ոչ թե պատմության ավարտն է, այլ դեռ սկիզբն է»:

Հիշեցնենք, որ օրեր առաջ՝ հունվարի 25-ին, ԱՄՆ-ն հայտարարել էր՝ Ուկրաինային պատրաստվում է M1 Abrams տեսակի 31 տանկ փոխանցել:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՀՔԸ

Երեկվանից մեկնարկել է Առաջավորաց պահքը: Այն տեւում է հինգ օր:

Առաջավորացն առաջին պահքն է, որ հաստատվել է Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, եւ հենց այդ պատճառով էլ կոչվում է Առաջավորաց՝ առաջին:

Առաջավորաց պահքը հիմնականում նախորդում է Ս. Սարգսի տոնին, սակայն տոնի հետ որեւէ առնչություն չունի: Պահք պահելուց առաջ ցանկալի է գնալ եկեղեցի, մասնակցել երեկոյան ժամերգության եւ աղոթել, որ Աստված զորացնի պահքը ճիշտ անցկացնելու եւ հոգեւոր օգուտներ քաղելու համար: Պահքից դուրս գալու համար կարեւոր է Ս. Սարգսի տոնին մասնակցել Ս. Պատարագին եւ հաղորդություն ստանալ: Իսկ ինչո՞ւ ենք հինգ օր պահք պահում:

Մեր եկեղեցու հայրերը սրան մի քանի բացատրություն են տալիս:

Ինչպես արդեն ասվեց, Ս. Գրիգոր Լուսավորչի կարգադրությամբ՝ ողջ արքունիքը եւ հայ ժողովուրդն ապաշխարության եւ պահքի մեջ եղան 5 օր:

Քանի որ մարդը հինգ զգայարան ունի՝ տեսանելիք (աչքերը), լսելիք (ականջները), հոտոտելիք (քիթը), ճաշակելիք (բերանը) եւ շոշափելիք (ձեռքերն ու ոտքերը), որոնցով մեղանչում է, ուստի այս պահքի հինգ օրերի ընթացքում պիտի զղջա սրանցով կատարած իր մեղքերի համար, խոստովանի դրանք Աստծուն եւ ջանա այլեւս չմեղանչել:

Ինչպես հայտնի է, Աստված աշխարհն ու նրանում եղած ամեն ինչ ստեղծեց 6 օրում:

Վեցերորդ օրը ստեղծեց մարդուն, եւ թեեւ մինչ այդ արդեն ստեղծել էր բոլոր տեսակի կենդանիներին, տվել նրանց աճելու ու բազմանալու հրաման, սակայն ուտելու հրաման դեռեւս չէր տվել:

Այդ հրամանը (տես՝ Ծնն. 1:29-30) մարդուն ու կենդանական աշխարհին տվեց միայն վեցերորդ օրը, այսինքն՝5 օր հետո:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 50-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատողները Գերմանիայի Հալլեի Մարտին Լյութերի անվան համալսարանի գործընկերների հետ պեղումներ են իրականացրել Ջրաձորի ամրոց-բնակավայրում: Արդյունքում բացահայտվել են որոշակի համադրելի իրողություններ Շիրակի՝ Ք.ա. IX-VIII դդ. իրարից հեռու տեղադրված բնակավայրերում: «Ջրաձորի N 5 կացարանի տափանված հատակի վրա բացվել են սաջ եւ աղորիքներ: Նույն տեղում հայտնաբերվել է հոր՝ լցված Ք.ա. IX-VIII դարերին բնորոշ առարկաներով:

Պատկերը նույնն է Ազատանի ամրոցի պարսպին հարող համաժամանակյա կացարանում եւ Շիրակավանի ամրոցում: Նման ընդհանրությունների առկայությունը տարբեր հուշարձաններում թույլ է տալիս եզրակացնել, որ Ք.ա. VIII դ. երկու ամրոցները եւ բնակավայրերը ենթարկվել են հարձակման: Եթե Ազատանի բնակավայրում այն արտահայտվել է խոշոր հրդեհով, ապա Ջրաձորի ամրոց-բնակավայրում եւ Շիրակավանի ամրոցում հայտնաբերվել են ուրարտական ջարդված եւ ծռված զենքեր, պարսպի մեջ մտած նետասլաքներ: Այս իրողությունների համադրումը Շիրակում գտնվող ուրարտական երկու արձանագրությունների տվյալների հետ թույլ է տալիս դիտարկել ուրարտական զորքերի՝ հյուսիսից հարավ-արեւելք եւ հարավ-արեւմուտք, այնուհետեւ՝ Ախուրյան գետի ավազանով դեպի Արարատյան դաշտ շարժման ուղղությունները»,- ասում է գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Արմեն Հայրապետյանը:

Ըստ նրա՝ Ջրաձորի եւ Ազատանի պեղումներով հնարավորություն է ստեղծվել հետեւել Շիրակում Ք.ա. IX-VIII դարերում տեղի ունեցած քաղաքական, ռազմական տեղաշարժերին: Ուրարտուի արքա Արգիշտի Ա-ի օրոք դեպի Էրիախի երկիր կատարված ռազմական գործողությունների երթուղին, ըստ գրավոր աղբյուրների, նշմարվում էր, սակայն բացակայում էին դրանց հնագիտական հիմնավորումները:

«Շիրակի՝ Ք.ա. 1-ին հազարամյակում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադրության հետազոտությունը հնարավորություն է տալիս հետեւել Ուրարտական պետության ընդարձակման տրամաբանությանը: Այս առումով, բացի հնագիտական նշանակությունից, տվյալներ են կուտակում նաեւ ուրարտագիտության համար»,- նշում է Արմեն Հայրապետյանը:

Ջրաձորի հուշարձանի հնագիտական հետազոտությունները սկսվել են «Շիրակի պաշտպանական կառույցների հետազոտություն» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Այնուհետեւ արշավախումբը գործել է Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի եւ Հալլեի Մարտին Լյութերի անվան համալսարանի արշավախմբի համատեղ ֆինանսավորմամբ:

Ջրաձորի եւ Ազատանի ամրոց-բնակավայրերի պեղումների արդյունքների մասին հոդվածներ, հաղորդումներ են տպագրվել հայկական եւ արտասահմանյան պարբերականներում:

ՆԱԽԱԳԻԾ

80–138 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման եւ ատեստավորման արդյունքում ՀՀ պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգի նախագիծը: Ներդրված կամավոր ատեստավորման համակարգի փորձնական ծրագիրը շարունակաբար կխրախուսի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացումը եւ լրավճարի տրամադրման միջոցով կնպաստի դասավանդման որակի եւ արդյունավետության բարձրացմանը: Նախագծով սահմանվել է.

-2023 թվականից սկսած՝ ատեստավորմանը կմասնակցեն պետական եւ համայնքային մարզադպրոցներում ուսումնամարզական գործընթաց իրականացնող ազատ ոճի եւ հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ձյուդո մարզաձեւերի, ինչպես նաեւ արվեստի եւ երաժշտական դպրոցների դաշնամուր եւ երաժշտության տեսություն (սոլֆեջո եւ երաժշտական գրականություն) դասավանդող մանկավարժական աշխատողները:

-2024 թվականից սկսած՝ ատեստավորմանը կմասնակցեն նաեւ պետական եւ համայնքային մանկապատանեկան ստեղծագործական եւ գեղագիտական կենտրոններում, մշակույթի տներում դասավանդող մանկավարժական աշխատողները:

-2023 թվականից սկսած՝ ատեստավորմանը կարող է մասնակցել նաեւ որեւէ հաստատությունում չաշխատող եւ մանկավարժական աշխատողի պահանջները բավարարող անձը, որը լրավճար կարող է ստանալ որեւէ հաստատությունում աշխատանքի ընդունվելու օրվանից:

Համաձայն նախագծի՝ ատեստավորումն անցկացվում է յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ: Մանկավարժական աշխատողի ատեստավորման գործընթացի ժամանակացույցը՝ ըստ ուղղության եւ քննական կենտրոնների, հաստատվում է ԿԳՄՍ նախարարի հրամանով եւ հրապարակվում նախարարության եւ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի կայքերում ժամանակացույցով հաստատված առաջին ատեստավորումից առնվազն 20 աշխատանքային օր առաջ: Ատեստավորումն անցած մանկավարժական աշխատողներին լրավճար տրվում է 5 տարի ժամկետով, որը հաշվարկվում է ատեստավորումից սկսված:

Ատեստավորմանը մասնակցելու համար հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակվում է նախարարության եւ ԳԹԿ-ի կայքերում: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ներկայացվում է այն ուղղությունների ցանկը, որոնցով դասավանդող մանկավարժական աշխատողները կարող են հայտ ներկայացնել, ինչպես նաեւ տվյալ ուղղության ատեստավորմանը հատկացվող ժամանակահատվածը: Մանկավարժական աշխատողները հայտերը կարող են ներկայացնել յուրաքանչյուր տարվա մարտի 15-ից մինչեւ առաջին ատեստավորմանը նախորդող 20-րդ օրը: Հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքում՝ կցելով սահմանված փաստաթղթերն ու տեղեկատվությունը: Անկախ դասավանդած ուղղությունների քանակից՝ մանկավարժական աշխատողը տվյալ տարում կարող է ատեստավորման հայտ ներկայացնել միայն մեկ ուղղությամբ՝ իր ընտրությամբ:

Տվյալ ուղղությամբ ոլորտային մասնագետներից կազմված հանձնաժողովը ձեւավորվում է ԳԹԿ տնօրենի հրամանով: Թեստերը, մեթոդական ուղեցույցները, առաջադրանքներում ընդգրկվող նյութը եւ առաջադրանքների նմուշները, ըստ ուղղությունների, մշակվում են ԳԹԿ-ում տվյալ ուղղությամբ ոլորտային եւ առնվազն 7 տարվա գիտամանկավարժական գործունեության փորձ ունեցող մասնագետներից կազմված հանձնաժողովի կողմից, տվյալ որակավորմամբ մասնագիտական կրթություն տրամադրող բուհում եւ տրամադրվում ԳԹԿ-ին: ԳԹԿ-ն յուրաքանչյուր ատեստավորումից առնվազն 20 աշխատանքային օր առաջ հրապարակում է մեթոդական ուղեցույց, որում ներկայացվում են թեստերի կառուցվածքը, առաջադրանքներում ընդգրկվող նյութը, ձեւաթղթի լրացման կարգը եւ առաջադրանքների նմուշներ: Հայտ ներկայացրած մանկավարժական աշխատողների ցուցակների հիման վրա՝ ԳԹԿ-ն Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում ընտրում է ատեստավորման կենտրոններ, որտեղ գործընթացը կազմակերպում են կենտրոնի ղեկավարը եւ ներկայացուցիչները: Ատեստավորումն անցկացվում է գրավոր՝ թեստերի միջոցով: Թեստերը բաղկացած են ընտրովի կամ կարճ պատասխաններ պահանջող առաջադրանքներից:

Պատասխանների ձեւաթղթերը ստուգվում են ԳԹԿ-ում համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով: Ատեստավորման արդյունքները հրապարակվում են ատեստավորման օրվանից հետո՝ հինգերորդ օրը,՝ ԳԹԿ-ի կայքում: Ատեստավորման արդյունքի հետ անհամաձայնության դեպքում մանկավարժական աշխատողն արդյունքների հրապարակմանը հաջորդող օրը՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, կարող է բողոքարկման դիմումը էլեկտրոնային եղանակով ուղարկել մասնագիտացված բուհի մասնագիտական հանձնաժողովին: Բողոքարկման արդյունքում ընդունվում է որոշում գրավոր աշխատանքի միավորի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին:

Լրավճար տրվում է միայն հաստատությունում աշխատող մանկավարժական աշխատողին: Մեկ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխման արդյունքում լրավճարը պահպանվում է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադպրոցական ուսումնական հաստատություններում դրույքաչափերը խիստ տարբեր են՝ ըստ տարբեր համայնքների, կախված համայնքների բյուջեներից, սահմանվում է ամրագրված լրավճար՝ մեկ դրույք ծանրաբեռնվածության համար.

-ատեստավորման 90-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 138.300 դրամ լրավճար,

-ատեստավորման 80-89 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 111.500 դրամ լրավճար,

-ատեստավորման 70-79 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 80.600 դրամ լրավճար:

ԵՎՐՈՊԱՅԻ 2027 Թ.-Ի ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի նախաձեռնությամբ եւ ՀՀ կառավարության աջակցությամբ մարմնամարզության Եվրոպայի կանանց եւ տղամարդկանց 2027 թվականի առաջնությունը կանցկացվի Երեւանում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի գնահատմամբ՝ սա շատ կարեւոր իրադարձություն է, որն իրականություն դարձնելու համար ՀՀ կառավարությունն ու Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիան արել են հնարավորը. «Այս նվաճումը մի քանի ամսվա աշխատանքի արդյունք է: Մարմնամարզությունն այժմ մեծ տեմպերով է առաջ գնում եւ ամենաուժեղ մարզաձեւերից մեկն է»: Հայաստանի մարմնամարզության հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանի խոսքով՝ Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիան Եվրոպայի առաջնությունը հյուրընկալելու հայտը ներկայացրել է շուրջ 4 ամիս առաջ. «Մարմնամարզությունն «Ա» դասի մարզաձեւ է, որով ամբողջ աշխարհում զբաղվում է շուրջ 30 միլիոն մարզիկ: Այսպիսի մարզաձեւից Եվրոպայի առաջնություն ընդունելն իսկապես շատ մեծ նվաճում եւ հաջողություն է մեզ համար: Մշտապես զգացել ենք Հայաստանի կառավարության աջակցությունը, եւ, առանց այդ աջակցության, ոչինչ չէր ստացվի»,- ասում է Հակոբ Սերոբյանը: Գլխավոր մարզչի խոսքով՝ Երեւանում անցկացվելիք Եվրոպայի առաջնության շնորհիվ՝ կլուծվի նաեւ մարզագույքի հարցը. «Սա իսկապես մեծ հնարավորություններ կտա մեր երիտասարդներին: Սրանով նաեւ լուծում են ստանում ենթակառուցվածքների, դահլիճի, գործիքների եւ մի շարք այլ հարցեր: Սա նշանակում է, որ 15-20 տարի մեր երիտասարդները որեւէ բանի կարիք չեն ունենա: Կունենանք միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան դահլիճ, գործիքներ եւ շատ լավ պայմաններ, այն ամենը, ինչի մասին մենք երազում էինք»: Մասնագետի խոսքով՝ Հայաստանում մարզաձեւի մասսայականացման եւ տարածման տեսանկյունից եւս Եվրոպայի առաջնության հյուրընկալումը կարեւոր քայլ է: Նշենք՝ 2023թ. բավականին հագեցած է լինելու մարմնամարզիկների համար: Փետրվարի 7-ից Հայաստանի մարմնամարզության երիտասարդների եւ մեծահասակների հավաքականներն ընդլայնված կազմով ուսումնամարզական հավաքի են մեկնելու Թբիլիսի, այնուհետեւ Գերմանիայում եւ Կատարում մասնակցելու են Աշխարհի գավաթի փուլերին: Մարտ-ապրիլ ամիսներին մարմնամարզիկները Թուրքիայի Անթալիա քաղաքում կմասնակցեն երիտասարդների աշխարհի առաջնությանը, մեկ շաբաթ անց էլ՝ Եվրոպայի առաջնությանը: Գլխավոր մարզչի խոսքով՝ իրենք շատ պարտավորված են եւ ամեն ինչ անելու են պատվով հանդես գալու համար: Այդուհանդերձ, տարվա կարեւորագույն ստուգատեսը սեպտեմբերի վերջին մեկնարկող աշխարհի առաջնությունն է, որտեղ խաղարկվելու են Փարիզի՝ 2024 թվականի օլիմպիական խաղերի ուղեգրեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ՉԵՄ ԳԻՏԱԿՑՈՒՄ»

ԾՈՎԻՆԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ՝ 38-ԱՄՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Օրերս դերասանուհի Ծովինար Մարտիրոսյանը նշել է ծննդյան 38-ամյակը: Ծովինար Մարտիրոսյանը ArmLur.am-ի հետ զրույցում պատմել է տարեդարձի մանրամասների մասին:

Դերասանուհու խոսքով՝ առաջին անգամն է, երբ նա տարեդարձը նշում է ոչ այնքան ուրախ, քանի որ այն համընկել էր 15 զինծառայողի չարաբաստիկ մահվան դեպքի հետ. «Առհասարակ, տրամադրություն չունեի եւ հենց այդպես էլ արթնացել էի. չնայած ես շատ եմ սիրում ծննդյանս օրը նշել, ուրախանալ, բայց վերջին դեպքերի հետ կապված դա անհնար էր: Տարեդարձս նշեցի տանը ընտանեկան միջավայրում, իսկ հաջորդ օրը կրկին տանը՝ ընկերուհիներիս հետ»:

Ծովինարի կարծիքով՝ կինն ամեն տարիքում յուրովի է փոխվում, ավելի խոհեմ է դառնում:

«Անկեղծ ասած, ես չեմ գիտակցում, որ ես մեծացել եմ: 38 տարեկանը ինձ համար շատ մեծ էր, երբ ես 16 տարեկան էի, բայց հիմա հասկանում եմ, որ դրանք ընդամենը թվեր են. մարդու հոգին պետք է տարիք չունենա»,- նշեց նա:

Անդրադառնալով երազանքին՝ Ծովինարն ասաց, որ այս պահին միայն երազում է խաղաղության մասին, որ ոչ մի կորուստ չունենանք, ապրենք անվտանգ եւ խաղաղ, հաղթանակած երկրում:

«Իսկ ինչ վերաբերում է ամուսնուս կողմից նվեր ստանալուն, ապա կասեմ, որ իմ ամուսինն արդեն ինձ հիանալի նվեր է մատուցել. ես նրա կինն եմ եւ ունեմ երկու զավակ, դրանից լավ նվեր նա չէր էլ կարող ինձ նվիրել: Ես նյութական մարդ չեմ, ես սիրում եմ, երբ իմ մտերիմները ազնիվ են ինձ հետ, գնահատում են ինձ եւ չեն դավաճանում: Դա ինձ համար աշխարհի ամենալավ նվերն է»,- հավելեց դերասանուհին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ⇨ ՀԻՎԱՆԴԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԵՆ

Զինվորական կացարանի հրդեհից տուժած բոլոր զինծառայողները տեղափոխվել են հիվանդասենյակ, այդ թվում նաեւ՝ հրամանատարը: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասացին Այրվածքաբանության ազգային ինստիտուտից:

Մեր տեղեկությունների համաձայն՝ խիստ հսկողություն է սահմանված հատկապես սպայի հիվանդասենյակի մոտ. ստուգվում են բոլոր այցելուները, այդ թվում նաեւ՝ բուժանձնակազմը:

Նշենք, որ հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի զորամասի վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով ծանր այրվածքներ էին ստացել երեք զինծառայող եւ տեղափոխվել Երեւան՝ Այրվածքաբանության կենտրոն. այրված շինությունից դուրս է բերվել 15 դի:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՑԱՆԿԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2023 թվականի հունվարի 26-ի N 136- Ա/2 հրամանով՝ հաստատվել է 2023-2024 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ դասարանների դասագրքերի գործածության երաշխավորված ցանկը: Ըստ հրամանի՝ հաստատվել են նաեւ ազգային փոքրամասնությունների եւ բրալյան դասագրքերը: Տարրական դասարանների բոլոր աշակերտներին դասագրքերը տրամադրվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Ազգային փոքրամասնությունների համար բոլոր դասագրքերը հատկացվում են անվճար: Պետական միջոցներով են տրամադրվում նաեւ բրալյան դասագրքերը:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԿԵՐՊԱՐ

«Միսս Հայաստան», «Վիցե միսս Եվրոպա 2005» գեղեցկուհի Լուսինե Թովմասյանը նոր լուսանկար է հրապարակել՝ ներկայանալով ոճային կերպարում:

Սոցիալական ցանցի իր էջում տեղադրված կադրում գեղեցկուհին սեւ բլուզ եւ նույն երանգի տաբատով է, որոնք համադրել է մանուշակագույն բաճկոնի հետ: Երիտասարդ մայրիկի մազերն արձակված են, մեղմ շպարով է: Հրապարակմանը կից նա մեջբերել է Թերի Գուիլեմեթսին. «Ծաղկի գրավչությունն իր հակասությունների մեջ է՝ այնքան նուրբ ձեւով, բայց ուժեղ բուրմունքով, այնքան փոքր չափերով, բայց մեծ գեղեցկությամբ, այնքան կարճ կյանքով, բայց երկար էֆեկտով»:

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

Amazon Studios-ը նկարահանում է մարմնի փոխանակման մասին ֆիլմ՝ դերասանուհիներ Ջուլիա Ռոբերթսի եւ Ջենիֆեր Էնիսթոնի մասնակցությամբ:

Ֆիլմի (որի անվանումը դեռեւս չի բացահայտվում) սցենարիստն ու ռեժիսորը Մաքս Բարբակովն է: Նախագծի համապրոդյուսեր է հանդիսանում LuckyChap Entertainment-ը, որը պատկանում է Մարգո Ռոբիին եւ Թոմ Աքերլիին:

Ֆիլմի սցենարը եւ ռեժիսորը կլինի Մաքս Բարբակովը (Hang Out in Palm Springs): Նախագիծը կարտադրի LuckyChap Entertainment-ը, որը պատկանում է Մարգո Ռոբիին եւ Թոմ Աքերլիին:

Կատակերգության սյուժեի մանրամասներն անհայտ են: Արտադրության եւ թողարկման ժամկետները դեռեւս հայտնի չեն:

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԶՈՒՄԸ՝ ԴՈՒԲԱՅՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի պրեմիեր լիգայի առաջատար «Ուրարտուն» ժամանել է Դուբայ եւ անցկացրել է առաջին մարզումը:

Մինչեւ փետրվարի 13-ը շարունակվող ուսումնամարզական հավաքի ընթացքում «Ուրարտուն» կանցկացնի 5 ստուգողական հանդիպում:

Մրցակիցները կլինեն Սանկտ Պետերբուրգի «Զենիթը», Մոսկվայի «Լոկոմոտիվը», արաբական «Յունայթեդ», «Գալֆ Յունայթեդ» եւ «Գրին Հերոնս» ֆուտբոլային ակումբները:

● *Փետրվարի 1-ին «Կամի» երաժշտական ակումբում տեղի կունենա «Կարինա Առուստամյան եւ The Band» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Միջմարզային ճանապարհին թույլատրելի արագությամբ երթևեկելիս մեքենաս վնասվել է՝ ընկնելով փոսը. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել փոխհատուցման համար:

Սամվել Թովմասյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Առաջնահերթ անհրաժեշտ է ահազանգել Ճանապարհային ոստիկանություն 1-77 հեռախոսահամարով եւ հայտնել տեղի ունեցած վթարի մասին մանրամասներ: Ճանապարհային ոստիկանության տեսուչները կգան դեպքի վայր, կկազմեն վթարի առաջացման սխեման, կարձանագրեն, որ վնաս է պատճառվել Ձեր ավտոմեքենային: Անհրաժեշտ է նաեւ տեղի ունեցածի մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան վթարի պահից 40 րոպեի ընթացքում զանգահարել այն ապահովագրական ընկերություն, որտեղ ապահովագրել եք Ձեր տրանսպորտային միջոցը: Այնուհետեւ պետք է լուսանկարահանել եւ տեսանկա-րահանել ճանապարհի այդ հատվածում առկա փոսը, մեքենայի վնասված հատվածները, որոնք հետագայում անհրաժեշտ է դիմումին կից ներկայացնել ապահովագրական ընկերություն՝խնդրելով իրականացնել Ձեր մեքենային պատճառված վնասի չափի փորձաքննություն եւ պարզել Ձեր մեքենային պատճառված վնասի չափը: Եթե ապահովագրական ընկերությունը մերժում է իրականացնել փորձաքննությունը՝պատճառաբանելով, որ տեղի ունեցածը ճանապարհատրանսպորտային պատահար չէ, ապա Դուք կարող եք փորձաքննություն պատվիրել այլ մասնավոր փորձագիտական կազմակերպու-թյուններում:

Միաժամանակ անհրաժեշտ է պարզել, թե ում վրա է դրված ճանապարհի այդ հատվածի պահպանումը: Այդ նպատակով անհրաժեշտ է դիմել համապատասխան մարզի ղեկավարին՝ մարզպետին՝ խնդրելով հայտնել, թե ում վրա է դրված ճանապարհի այդ հատվածի պահպանումը եւ վերանորոգման պարտականությունների կատարումը: Եթե ճանապարհի պահպանումը դրված է մարզպետարանի վրա, ապա հենց մարզպետարան էլ պետք է դիմում ներկայացնել՝ վնասների փոխհատուցման պահանջի մասին՝ դիմումին կից ներկայացնելով այն բոլոր լուսանկարներն ու նյութերը, որոնք վերաբերում են տեղի ունեցած պատահարին:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վնասների փոխհատուցում չտրամադրելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել դատարան՝ ընդդեմ այն մարզպետարանի կամ կազմակերպության, որի վրա դրված է եղել ճանապարհի պահպանումը եւ ժամանակին վերանորոգումը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Տեղեկատվության տնօրինողը մերժել է տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով, որ դա նպատակահարմար չէ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Մանվել Հովհաննիսյան (20 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Ձեր՝տեղեկատվության հարցումը ստանալով՝տեղեկության տնօրինողը այն չի տրամադրել՝պատճառաբանելով, որ դրա տրամադրումը կարող է անհարմարություն ստեղծել կամ լինել ոչ նպատակահարմար, ապա այդպիսի մերժումը անօրինական է եւ չպատճառաբանված: Պետք է հիշել, որ տեղեկատվության տնօրինողն իրավունք ունի մերժել տեղեկատվության տրամադրումը բացառապես օրենքով սահմանված հիմքերով, որոնք հետեւյալ հինգն են՝

-տեղեկատվությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք,

-տեղեկատվության տրամադրումը կարող է խախտել մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը,

-տեղեկատվությունը պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,

-տեղեկատվության տրամադրումը բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

-տեղեկատվության տրամադրումը խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

Բացի վերոնշյալ հիմքերից, տեղեկատվության տնօրինողը որեւէ այլ պատճառաբանությամբ իրավասու չէ մերժել տրամադրել տեղեկատվությունը: Ավելին՝ հստակ է այն կարգավորումը, համաձայն որի՝տեղեկատվության տնօրինողը չի կարող մերժել տեղեկատվության տրամադրումը, եթե այն լրացուցիչ դժվարություններ է ներկայացնում իր համար կամ ստեղծում է անհարմարություններ: Այս կարեւոր սկզբունքը ապահովում է վարչական մարմինների կամայականությունների բացառումը: Բացի այդ, տեղեկատվության տնօրինողը պարտավոր է իր մերժման մեջ հողում կատարել օրենքի այն նորմին, որի հիմքով մերժում է տրամադրել տեղեկատվությունը:

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նմանատիպ դեպքերում կարող եք կրկին նույն տեղեկատվությունը պահանջելու հարցում ուղարկել այն տնօրինողին՝նշելով, որ տրամադրված մերժումն անհիմն է եւ չի բխում օրենքից: Ձեր այս երկրորդ դիմումով կարող եք մանրամասն պարզաբանել, որ, Ձեր հարցմանը ի պատասխան, անհիմն մերժում տրամադրելը խախտում է Ձեր իրավունքները, որ եթե երկրորդ անգամ եւս չտրամադրի այն, ապա կդիմեք դատարան Ձեր իրավունքների պաշտպանության նպատակով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Վանաձորում

Վանաձորի աթլետիկայի մարզադպրոցում հունվարի 28-ին կայացել է Լոռու մարզի աթլետիկայի ֆեդերացիայի ձմեռային բաց առաջնությունը: «Մրցաշրջան-2023»-ի մեկնարկային մրցաշարին մասնակցել են Երեւանի, Գյումրու, Վանաձորի, Արտաշատի եւ Կապանի հավաքական թիմերի՝ 20 տարեկան եւ ավելի ցածր տարիքի շուրջ 130 մարզիկներ:

Մրցաշարին մասնակցել են նաեւ Հայաստանի մեծահասակների տղամարդկանց եւ կանանց հավաքականների մարզիկները: Մրցաշարին ներկա է եղել եւ հաղթողներին պարգեւատրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության պետ Նարինե Շահբազյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: